ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՏԵՍԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁ

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ, ԱՐՄԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Կարլ Մարքսը հասցրեց տպագրել իր կյանքի հիմնական գործի՝ «Կապիտալի» միայն առաջին հատորը՝ 1867 թ.: Անցել է ավելի քան 150 տարի: Մարքսի ուսմունքի հանդեպ վերաբերմունքն այս ընթացքում եղել է ծայրահեղորեն հակասական: Խորհրդային Միությունում մարքսիզմ-լենինիզմը պետական գաղափարախոսություն էր, Մարքսը և Լենինը հռչակված էին տեսական մտքի գագաթ, անառարկելի հեղինակություն: ԽՍՀՄ-ի փլուզումը ինքնաբերաբար նույնացվեց մարքսիզմի ձախողման հետ: Հոդվածներ հրապարակվեցին «Մարքսի սխալը» թեմայով, որոնց մի մասը նախկին մարքսիստների ապաշխարանքի միջոց էր: Տեղին է բրիտանացի տեսաբան Թ. Իգլթոնը արձանագրում. «Մարքսիստները ոչինչ այնքան չեն ցանկանում, որքան դադարել մարքսիստ լինելուց»[1]: Նա ինքը առանձնացնում է Մարքսին վերագրվող «տասը ստանդարտ սխալ» և դրանք հերքում:

Կարլ Մարքսը 19-րդ դարի մտածողներից է, ուստի իրավունք չունենք նրանից պահանջելու այն իմացությունը, ինչը հնարավոր չէր ժամանակին: Կապիտալիզմի ձևավորման «արշալույսին» նա կարողացավ նկարագրել ոչ միայն այս կացութաձևի հաստատութենական բովանդակությունը, այլև զարգացման և հասարակական-տնտեսական նոր «ֆորմացիաների» ձևավորման պայմաններն ու էվոլյուցիոն հնարավորությունները: Եթե որպես արմատական հեղափոխական Մարքսը սխալներ է թույլ տվել, ցանկալին մատուցել իրականություն, ապա որպես գիտնական, հետազոտական աշխատանքի մշակ նրա անձը վեր է ամեն տեսակի քննադատությունից, իսկ տիտանական աշխատանքի արգասիքը՝ «Կապիտալը», արժանի է գոնե մեկ անգամ կարդալու: Դա հարկավոր է թեկուզ միայն այն պատճառով, որ, ինչպես ամերիկացի տնտեսագետ և սոցիոլոգ Ռ. Հայլբրոներն է ասում, «մեր առջև մի տնտեսագետ է, որ կարդացել է մյուս բոլոր տնտեսագետների աշխատությունները, գերմանացի պեդանտ, որն առիթը բաց չի թողնում կետեր դնելու i տառի վրա, հաշվի առնելու ամեն մի մանրամասն....»[2]: 19-րդ դարում բազում արժեքավոր գրքեր են լույս տեսել, դրանցից մի քանիսը իրենց ասպարեզում հսկայական ներդրում են եղել, սակայն ոչ

---

[1] **T. Eagleton**, Why Marx Was Right, London: Yale University Press, 2011, p. 1.

[2] **Хайлбронер Р. Л.** Философы от мира сего. Великие экономические мыслители: их жизнь, эпоха и идеи. М.: АСТ, 2016, с. 197.

մեկն այնպես չի ազդել թե՛ տեսական մտքի և թե՛ համաշխարհային իրադարձությունների վրա, ինչպես «Կապիտալը»: Որևէ խելամիտ մարդ կհամարի՞ արդյոք, որ Մարքսն է մեղավոր «մարքսիզմ-լենինիզմ» բառակապակցության համար: Մարքսի հայացքների հետ կատարվեց այն, ինչ շատ մեծերի հետ է կատարվել, և ինչպես Մաքիավելին կասեր, թե ինքը մաքիավելական չէ, Նիցշեն՝ նիցշեական չէ, Մարքսն էլ, եթե հնարավորություն ունենար կարդալու Լենինի, Տրոցկու, Բուխարինի, Ստալինի և բոլշևիկյան մյուս մարքսիստների գրվածքները, առավել ևս եթե տեսներ իր անունով իրականացվող քաղաքականությունը, նույնպես կհայտարարեր, որ ինքը մարքսիստ չէ: «Մարքսիզմ-լենինիզմ» ասվածն իրականում Մարքսի փիլիսոփայության հարմարեցումն էր «լենինիզմի» քաղաքական նպատակներին:

ԽՍՀՄ փլուզման շեմին եղան փիլիսոփաներ, որ բացեիբաց հայտարարեցին, թե «Մարքսի բուն մոտեցումը փիլիսոփայությանը տակավին վատ է իմաստավորված և հարկավոր է, որ դառնա հատուկ ուշադրության առարկա»[3]: Բայց դժվար է հաղթահարել նախկին վերաբերմունքի իներցիան, քանի որ այս խոստովանությունից անգամ քսան տարի անց դեռ հարկ եղավ փիլիսոփաներին հիշեցնելու, թե «մոռացել ենք Մարքսին»[4], դեռ ավելին՝ վկայություն, որ «դժվար է Ռուսաստանում գտնել մեկին, ով «Կապիտալը» գոնե թերթել է ուշադիր»[5]: Նշանակում է Մարքսին աճապարանոք «սխալ հանողները» պիտի նախապես իրենց իսկ համար պարզեն, իսկ արդյոք ճիշտ են հասկանում Մարքսի հայացքները:

Մարքսի հասցեին շրջիկ մեղադրանքներից է, թե նրա գաղափարները ուշագրավ են, բայց կտրված իրականությունից: Սա ասվում է փաստական վիթխարի նյութի, կուռ տրամաբանությամբ գրված աշխատությունների մասին: Մարքսն ինքն է քննադատել նախընթաց փիլիսոփայությանը բնորոշ սքոլաստիկան, կտրվածությունը կենսական խնդիրներից, իսկ արմատական սոցիալական վերափոխումներ ուրվագծելիս մեծ տեղ է հատկացրել փիլիսոփաներին՝ պահանջելով հրաժարվել մտահայեցողական դատողություններից և իրական մասնակցություն ունենալ հանրային կյանքի իրադարձություններին:

Մարքսին դոգմատիզմի համար մեղադրելը քննադատության չի դիմանում: Իհարկե, «մարքսիզմ-լենինիզմի» տարատեսակը չխուսափեց և չէր էլ կարող խուսափել դոգմատիզմից: Բայց երբ ծանոթանում ենք Մարքսի հայացքները քննադատողների, առավել ևս «սխալներից» խոսողների դատողություններին, համոզվում ենք, որ հակամարքսիստների շրջանում ևս քիչ չեն դոգմատիզմին տուրք տվողները: Հենց դոգմատիկ մարքսիստներն են դարձել առաջին քննադատները, մինչդեռ «Կա-

[3] **Баллаев А. Б., Козлова М. С.** Предназначение философии. Мысли К. Маркса // "Историко-философский ежегодник". М.: "Наука", 1989, с. 5.

[4] **Семёнов В. С.** Забытый Маркс: о революции, социализме, человеке // "Вопросы философии", 2009, № 6.

[5] **Сендеров В. А.** Памяти марксизма // "Вопросы философии", 2011, № 3, с. 48.

պիտալը» գեթ մեկ անգամ թերթողը չի կարող չնկատել մարքսյան դատողությունների կուռ հետևողականությունը, ընդհանուր գիտական մեթոդների հմուտ գործածությունը, եզրակացությունների հստակությունը: Հիմնագուրկ է այն պնդումը, թե իբր «Մարքսը հայտնվել էր այն աշակերտի վիճակում, որ մաթեմատիկական խնդիր լուծելիս նախօրոք գիտի պատասխանը և լուծումն ամեն կերպ հարմարեցնում է դրան»[6]: Երբ ուսումնասիրում ենք երիտասարդ Մարքսի հասունացումը, տեսնում ենք, թե ինչպես է անվարան հրաժարվում նախկինում բարձր գնահատված որևէ դատողությունից, եթե տեսնում է դրա անհամապատասխանությունը իրականությանը: Այդպես է նա Լ. Ֆոյերբախի փիլիսոփայության միջոցով ազատվում հեգելյան փիլիսոփայության իդեալիզմից, բայց հետո խորանալով ֆոյերբախյան լուծումների մեջ և չհամաձայնելով հեղինակի հետ՝ կրկին վերադառնում է հեգելյան փիլիսոփայությանը՝ նորովի զարգացնելով գերմանացի մեծ փիլիսոփայի մեթոդի առավելությունը: Անցյալի և ներկայի քիչ հեղինակներ կարող են համեմատվել Մարքսի հետ, երբ նա քննադատում է որոշ փիլիսոփաների ջանքերը՝ բացահայտելու հավիտենական ճշմարտություններ, որոնք մնում է իրականություն դարձնել, և մարդկությունը այդկերպ կհասնի երանելի կատարելության:

Բնավ նոր չէ Մարքսի տեսական մտքի հասցեին նեղ էկոնոմիզմի մեղադրանքը: Այն դասական քաղաքատնտեսության ծիրում ուղղությունների տարանջատման սահմանված չափորոշիչի «վուլգար-պարզ» ընթերցման արգասիք է: Մարքսը սկզբունքորեն մերժում էր նախորդների գիտական «վուլգար-պարզ» մոտեցումների կենսունակության հնարավորությունը տնտեսությունում՝ պնդելով, թե նրանց աշխատություններում նկատելի են զուտ տնտեսական գործոնների տարաբովանդակ ընկալման միտումներ: Սա արտահայտված է Մալթուսի «ազգաբնակչության օրենքում», իրացման տեսությունում, Սեյի քաղաքատնտեսական համակարգում, Միլի ուսմունքում և այլուր: Չէ՞ որ տնտեսական անկման դրսևորումներն ու սոցիալական աղետների «ի հայտ գալը» բացատրվում էին իրերի բնականոն զարգացման ընթացքով՝ ազգաբնակչության աճի տեմպն անհամեմատ ավելի մեծ է, քան մարդկանց համար սնունդ արտադրելու հողի կարողությունն է, ապրանքների առաջարկը և փողի պահանջարկը նույնաբար հավասար չեն, պատճառ են տնտեսական զարգացման պարբերաշրջանները և այլ հաստատութենական գործոններ: Ապրանքի գնի և քանակության առնչությունը դիտարկվում է գիտական վերացարկմամբ, որից հետո հաշվի է առնվում ոչ գնային ու ոչ տնտեսական գործոնների դերը պահանջարկի ու առաջարկի դրսևորման և շուկայական հավասարակշռության հաստատման դեպքերում: Մարքսյան իմաստասիրության

[6] **Асатрян М. В.** Ключ к экономическим и социально-политическим ошибкам марксизма // "Вопросы философии", 2009, № 7, с. 30.

տնտեսագիտական բաղադրահիմքում զուտ տնտեսական գործոնների դիտարկմամբ վերլուծության սկիզբը՝ ապրանքը որպես համակարգի առաջնային բջիջ ու պարզագույն միավոր համարելը, ամփոփում է տնտեսական ֆորմացիայի բովանդակությունը՝ առանձնահատկությունների ու հակասությունների ողջ երանգապնակը: Վերլուծությունների իրականացման հետագա ընթացքում գիտական հարյուրավոր աղբյուրների հղումներ են կատարված՝ «Աստծո շնչով գրված խոսքի» մեկնություններ, սոցիալ-ուտոպիզմի տեսական հենքերի բացահայտումներ, դասական քաղաքատնտեսական ընկալումներ, Վերածնունդ և ֆրանսիական «լուսավոր մտածողություն», գերմանական խոհափիլիսոփայություն և այլն: Այսկերպ Մարքսին վերագրվող նեղ էկոնոմիզմի մեղադրանքը քննադատության չի դիմանում, մանավանդ ամեն դարաշրջանում այս ուսմունքում բացահայտվում են հաստատութենական իմաստային նորանոր շերտերի «հերթապահումներ»:

Մարքսի «սխալն» է համարվում կապիտալիզմի անխուսափելի փլուզման մասին դրույթը, որը ժամանակի փորձությանը չի դիմացել. կապիտալիզմը ծաղկում է, իսկ ահա «մարքսյան գաղափարների ոգով ստեղծված» խորհրդային հասարակությունը պատմության գիրկն է անցել: Բնականաբար, որոշ դրույթներ չբռնեցին ժամանակի փորձությունը, մասնավորապես չհաստատվեց կապիտալիզմի «գերեզմանափորի»՝ բանվոր դասակարգի բացարձակ աղքատացման վերաբերյալ մարքսյան միտքը. կյանքը ցույց տվեց, որ արևմտյան շատ երկրներում բանվորները լիովին ապահովված էին բարեկեցիկ կյանքով, ուստի և՝ ինտեգրված կապիտալիստական համակարգում և պատճառ չունեին դրա «գերեզմանը փորելու»: (Նկատենք, որ աշխատավորության վիճակի զգալի բարելավումը հետևանք էր նաև ԽՍՀՄ գոյության, որը կապիտալիստներին շարունակ հուշում էր սոցիալիստական հեղափոխության ներմուծման վտանգը և պարտադրում ենթարկվել արհմիությունների պահանջներին): Լավ, մի՞թե այսօր կանգնած չենք Մարքսի նկատած երևույթի նոր շրջադարձի՝ տեխնոլոգիական կործանարար գործազրկության և դրանից ածանցյալ՝ սոցիալ-քաղաքական և կառուցվածքային ցնցումների շեմին: Արտադրության և ծառայության ոլորտների հարաճուն ավտոմատացումը, ռոբոտացումը, համակարգչայնացումը հազարավոր որակյալ աշխատողների զրկում են աշխատանքից, իսկ պակաս որակյալ աշխատանքի խորշն արդեն զբաղված է չքավոր երկրներից էժան աշխատուժի առկայությամբ: Կապիտալիզմը ձևավորվել է պատմական, տնտեսական, քաղաքական, սոցիալական որոշակի պայմաններում, նրա ողջ պատմությունը ուղեկցվել և ուղեկցվում է ոչ միայն տեխնոլոգիական նորարարությամբ, տնտեսական բարգավաճմամբ, սպառման և ժամանցի լայն հնարավորությունների ստեղծմամբ, այլև տարատեսակ ճգնաժամերով, մարդկային և նյութական վիթխարի կորուստներով, կոտորածներով, շրջակա միջավայրի ահագ-

նացող ապականմամբ, քաղաքակրթության ջերմամիջուկային ինքնակործանման իրական սպառնալիքով: Կապիտալիզմի մարքսյան ախտորոշումը վերահաստատում են ժամանակակից փիլիսոփաները (ոչ բոլորն են հավատափոխ). «Կապիտալիզմը միշտ զարգացել է և շարունակում է զարգանալ անհավասարաչափ, անհամամասնորեն, աններդաշնակ, միակողմանի, անճոռնի»[7]: Եվ գնալով ավելի ակնհայտ է դառնում, որ կապիտալիստական համակարգի ինքնակարգավորման ներքին հնարավորությունները սպառվում են: Այնպես որ Մարքսի վերջնական եզրակացությունը միանգամայն հիմնավոր է եղել, և 150 տարի հետո նույնն են ձևակերպում ամերիկացի առաջատար մակրոսոցիոլոգները. «Կապիտալիզմի գոյությունը 500 տարվա ընթացքում չի ապացուցում, որ որպես համակարգ այն հավերժ է»[8]: Եվ արդեն անվանումներ են որոնվում կապիտալիզմին փոխարինող նոր համակարգի համար՝ առայժմ հիմնականում շատ զգուշավոր «հետկապիտալիստական» բնութագրմամբ: Եվ, թերևս, ամենապերճախոս վկայությունը «հետկապիտալիստական» կապիտալիզմի տեսաբաններից մեկի՝ Պոլ Մեյսոնինն է. «Մարքսը վերադարձե՛լ է»[9]:

Մարքսին մեղադրում են հետմարքսյան իրողությունների, մարքսիզմի տեսական աղավաղումների և Մարքսի անվամբ կատարված քաղաքական իրադարձությունների համար: Ըստ որոշ հեղինակների՝ «Ստալինը.... իրականացրել է Մարքսի գաղափարները, այդ թվում՝ նաև նրա սխալները»[10], «ստալինյան-բոլշևիկյան դիկտատուրան Կ. Մարքսի մշակումն է, նրա նախագիծն է»[11]: Բացարձակապես անհիմն եզրակացություն է: Այս տրամաբանությամբ Քրիստոսին կարող ենք մեղադրել ինկվիզիցիայի համար, Վոլտերին, Ռուսոյին և ֆրանսիացի մյուս լուսավորականներին՝ գիլյոտինի, Նիցշեին՝ նացիստական համակենտրոնացման ճամբարների համար և այլն: Իսկ Մարքսի գործածած «պրոլետարիատի դիկտատուրա» հասկացությունը ժամանակին նշանակել է ժողովրդի մեծամասնության իշխանություն, այսինքն՝ արտահայտել է ժողովրդավարության բուն էությունը:

«Կապիտալը» ոչ միայն տնտեսական կացութաձևերի էվոլյուցիայի, կապիտալիստական արտադրաեղանակի ծագման, հասունացման և անխուսափելի փլուզման մասին տնտեսագիտական ուսումնասիրություն է, այլև կապիտալիզմի գոյաբանության սոցիալ-փիլիսոփայական ընդգրկուն իմաստավորում: Արդեն մեզանից է կախված մարքսյան մեթոդաբանությունն օգտագործելը և 21-րդ դարի իրողությունների

---

[7] **Семёнов В. С.,** նշվ. աշխ., էջ 43:

[8] **Валлерстайн И., Коллинз Р., Манн М., Дерлугьян Г., Калхун К.** Есть ли будущее у капитализма? М.: изд-во Института Гайдара. 2017, с. 16.

[9] **P. Mason**, PostCapitalism: A Guide to our Future. London: Penguin Books, 2015, p. 49. Հեղինակը հիշեցնում է նաև, որ 2008 թ. տնտեսական ճգնաժամի սկզբում Մարքսի «Կապիտալի» վաճառքը 300 տոկոսով ավելացել էր:

[10] **Скиф М.** Фатальная ошибка Маркса // http://samlib.ru/s/skif_m/01001_marx_mistake. shtml

[11] **Шумаков А.** Ошибки “Капитала” К. Маркса // http:samlib.ru/s/shumakowai/a51.shtml

գիտական համակողմանի ուսումնասիրությունը համատեղել փիլիսոփայական իմաստավորման հետ: Իսկապես, ժամանակակից աշխարհում պարբերաբար կրկնվող և խորացող սոցիալ-տնտեսական ճգնաժամերը բացատրվում են Մարքսի վերլուծական մեթոդաբանությամբ, և նման հետազոտական զինանոցի անտեսումը, եթե չասենք դրա հանդեպ քամահրական վերաբերմունքը, թանկ է նստում հումանիտար գիտությունների վրա: Տարօրինակ է, որ մարքսյան մեթոդաբանությունը որպես ճանաչողական գործիք օգտագործելու փոխարեն ոմանք ցանկանում են «Կապիտալում» գտնել այսօրվա իրողության մանրամասն նկարագրությունը: Բայց, մեկ էլ շեշտենք, նման մոտեցումը, այսինքն՝ Մարքսին մարգարեի կամ գուշակի վերածելը ի՞նչ կապ ունի 150 տարի առաջ գրված գրքի և նրա հեղինակի հետ[12]:

Ամեն մի գիտական վերլուծության ելակետը նպատակի ձևակերպումն է: Կարևոր է հասկանալ, թե ինչ նպատակ ուներ Մարքսը, ինչու ձեռնամուխ եղավ այս տիտանական աշխատանքին: Բնական է ամենից առաջ դիմել հեղինակի ձևակերպումներին: Դրանք կան գրքի առաջին հրատարակության (1867 թ.) առաջաբանում և երկրորդի վերջաբանում (1873 թ.): Հենց սկզբից Մարքսը տեղեկացնում է ընթերցողին, որ «Կապիտալը» շարունակությունն է ավելի վաղ՝ 1859 թ. հրատարակած իր «Քաղաքատնտեսության քննադատության շուրջ» աշխատության, որի որոշ դրույթներ ինքը սեղմ վերաշարադրում է գրքի առաջին հատորի առաջին գլխում: Երկրորդ հրատարակության վերջաբանում նա ավելի հանգամանորեն է շարադրում իր նպատակը, ինչպես նաև այդ նպատակադրման դիրքերից անդրադառնում է մի շարք կարծիքների՝ ձգտելով թե՛ համախոհների և թե՛ հակառակորդների արձագանքներից ինքն իր համար պարզել, թե որքանով է նպատակը ճիշտ հասկացվել:

Նպատակադրման՝ որպես գիտական վերլուծության մեթոդաբանական հիմքի հստակեցմանը հետևում են ևս մի շարք դրույթներ: Այսպես, որևէ երևույթ, բացատրում է Մարքսը, հարկավոր է ուսումնասիրել դրա առավել զարգացած, ծավալուն փուլում: Ահա թե ինչու ապրանքային արտադրության առանձնահատկությունները ինքը հարկ է համարում ուսումնասիրել ոչ թե Գերմանիայի, այլ հատկապես Անգլիայի օրինակով: Այստեղից բխում է կարևոր մի եզրակացություն. զարգացած երկրների վիճակը «պակաս զարգացած երկրին ցույց է տալիս նրա սեփական ապագան»[13]: Այլ կերպ ասած՝ այն երևույթները, որ տեղի են ունենում ժամանակակից աշխարհի զարգացած երկրներում, վաղը դրսևորվելու են, մասնավորապես, նաև Հայաստանում,

---

[12] «Մարքսը մարգարե էր, ոչ թե բախտագուշակ» (**T. Eagleton**, Why Marx Was Right, p. 67): Թերի Իգլթոնի միտքն այն է, որ Մարքսը, ինչպես և աստվածաշնչյան մարգարեները, ոչ թե փորձել է ապագան գուշակել, այլ բնութագրելով ներկայի խորը հակասությունները՝ զգուշացրել, որ եթե մարդիկ չփորձեն ինչ-որ բան փոխել, ապա առհասարակ ապագա չեն ունենա (տես նույն տեղը, էջ 66 –67):

[13] **Маркс К.** Капитал. Т. 1. М.: "Политиздат", 1973, с. 9.

ուստի հարկավոր է դրանք, ինչպես նաև դրանք հաղթահարելուն ուղղված միջոցառումները ուսումնասիրել արդեն հիմա, ոչ թե պարզապես հայտարարել, թե «ճգնաժամը շրջանցելու է Հայաստանը»:

Հաջորդ դրույթը Մարքսի դիրքորոշումը շահեկանորեն տարբերվում է վոլյունտարիստական և ֆատալիստական փիլիսոփայությունների ծայրահեղությունից. առաջինը գերագնահատում է անհատի դերը պատմության մեջ՝ այդկերպ նսեմացնելով հասարակական երևույթների զարգացման օբյեկտիվ պատճառակցման իրողությունը, իսկ երկրորդը հակառակն է անում. մարդուն զրկում է գործունակությունից, վերածում անխուսափելի իրադարձությունների կրավորական մասնակցի: Մինչդեռ ըստ Մարքսի՝ հասարակության զարգացումը «բնապատմական ընթացք» է. մի կողմից՝ մարդիկ անկրկնելի են, ինքնուրույն սուբյեկտներ, առանձնահատուկ են նաև նրանց նպատակները և դրանց իրականացմանն ուղղված գործողությունները, որոնք էլ ի վերջո կազմում են պատմության ընթացքը ամեն մի որոշակի ժամանակում, ուստի և հասարակական երևույթներին բնորոշ օրինաչափությունը չի կարող չտարբերվել բնական աշխարհին հատուկ «կույր» օրինաչափություններից, բայց, մյուս կողմից, այն օբյեկտիվ պայմանները, որոնց մեջ ձևավորվում և գործում են այդ անկրկնելի մարդ-սուբյեկտները, հաղորդում են նրանց նպատակադրումների բովանդակությանը որոշակի ընդհանրություն՝ այդկերպ հասարակական երևույթներին նույնպես հաղորդելով կարծեք վերսուբյեկտային ընթացքի բնույթ: Այստեղից՝ տեսական և գործնական մի եզրակացություն, որ կարող ենք համարել յուրատեսակ հրամայական՝ ուղղված ամեն մի հասարակության քաղաքական-կառավարչական վերնախավին, այն է՝ եթե նույնիսկ մենք ճանաչենք հասարակական զարգացման խորքային պատճառները, պետք է գիտակցենք՝ այդ բնականի նման՝ «բնականոն» փուլերի վրայով «ոչ կարող ենք թռչել, ոչ էլ հրամանագրերով դրանք վերացնել», թեպետ կարող ենք «կրճատել և մեղմել երկունքի ցավերը»[14]: Նկատենք, որ Մարքսի որևէ քննադատ այստեղ կարող է, թերևս, հեղափոխական վոլյունտարիզմի տարրեր տեսնել, իրադարձությունների բռնի «արագացման» ցանկություն, բայց մենք կհամաձայնեինք, եթե Մարքսը չլիներ զուտ կաբինետային գիտնական, այլ մասնակցեր որևէ կուսակցության կամ շարժման հեղափոխական միջոցառումներին: Ճիշտ է, Մարքսը համահեղինակն է 1848 թ. հրատարակված «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի», բայց դա հենց մանիֆեստ է որ կա՝ նպատակների մասին հռչակագիր, որից բխող որևէ իրական գործողության Մարքսը չի մասնակցել: Մարքսը տեսաբան էր, գաղափարի մարդ, և կապիտալիստական արտադրաեղանակի հանգամանալից վերլուծությունից բխող նրա եզրակացությունը կապիտալիզմի անխուսափելի փլուզման մասին վերստին տեսական-մտահայե-

[14] Նույն տեղում, էջ 10:

ցողական կառույց է: Կապիտալիզմը իր իսկ զարգացման տրամաբանությամբ պատրաստում է սեփական կործանումը և սեփական «գերեզմանափորին»՝ բանվոր դասակարգին, բայց սա դարձյալ տեսական դատողություն է, որն ամրապնդված չէ ո՛չ գործողությունների ծրագրով, ո՛չ պայքարի եղանակների և մեթոդների պարզաբանմամբ, ո՛չ ժամկետների մասին որևէ հիշատակումով:

Արժե խոսել «սխալ» հասկացության մասին, որն այդքան դյուրությամբ գործածում են Մարքսի տեսական ժառանգության համար: Սխալ նախ կարող է լինել տվյալների մեջ, որոնց վրա կառուցվում է հեղինակի դատողությունը, ապա նրա բուն եզրակացությունների մեջ (բխեցման սխալ): Իսկ եթե մենք 150 տարի առաջվա գրքի դատողություններն ու եզրակացությունները համեմատում ենք արդիականության հետ և հայտնաբերում անհամապատասխանություն, ապա սխալ է հենց մեր մոտեցումը: Իսկ քի՞չ են սխալվում ժամանակակից տնտեսագետները և սոցիոլոգները: Չէ՞ որ ոչ մի տեսաբան չկարողացավ կանխատեսել 2008 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամը (սխալված չենք լինի՝ ասելով, որ դա նաև տնտեսագիտության ճգնաժամ էր): Ահա թե ինչ է ասում կանխատեսումներում սխալվելու անխուսափելիության մասին Ա. Թոֆլերը՝ ասպարեզի նշանավոր մասնագետներից մեկը. «Տնտեսագետները բավականին խորաթափանց են և ջանասեր, այդուհանդերձ նրանք հիմնավոր պատճառաբանումներ ունեն իրենց սխալ կանխատեսումներից շատերի համար»[15]: Եվ իսկապես, հեղինակը նշում է տեղեկատվության անորոշությունը, միջավայրի փոփոխականությունը, շտապողականությունը, պատահական հանգամանքների ի հայտ գալը և այլն: Կամ՝ ինչպես Քեյնսն է իր հայտնի աշխատանքի ավարտին եզրահանգում՝ տնտեսագետների ու քաղաքական գործիչների մտքերը, անկախ այն հանգամանքից՝ նրանք ճիշտ են, թե ոչ, ունեն մեծ նշանակություն, քան ընդունված է կարծել. իրականում նրանք են կառավարում աշխարհը[16]: Այդպես է, անշուշտ, և այդպես է եղել նաև 150 տարի առաջ, երբ Մարքսն ավարտում էր իր գործը: Այնպես որ անցյալի մտածողներին հարկավոր է գնահատել ըստ այն բանի, թե ինչ են նրանք տվել իրենց ժամանակի հոլովույթում և ժամանակի համար: Այդ տեսակետից կապիտալիստական արտադրաեղանակի ծագման, հասունացման և հետագա անխուսափելի կործանման մասին մարքսյան հիմնարար հետազոտությունը բացառիկ արժեքավոր է թե՛ փաստացի վիթխարի նյութի արձանագրման, թե՛ հետազոտության մեթոդաբանության և թե՛ ձևակերպված օրինաչափությունների մեծամասնության առումով:

Մարքսի տնտեսագիտական մտածողությունը (միջգիտակարգային ուսումնասիրությունները) լիարժեք ընկալելու ճանապարհին կա-

---

[15] **A. Toffler, H. Toffler**, Revolutionary Wealth. N.Y.: Random House, 2006, p. 117.

[16] Տե՛ս **Кейнс Дж. М.** Общая теория занятости, процента и денег. М.: «ЭКСМО», 2007, էջ 142:

բնոր է հաշվի առնել, որ դժվար է գտնել երկրորդին, որի աշխատանքներին այդօրինակ հղումներ են կատարում, հավասարապես ընդունում ու մեծարում են տնտեսագետները, փիլիսոփաները, սոցիոլոգները և բազում այլ գիտակարգերի ներկայացուցիչներ: Մարքսի տնտեսագիտական միտքը համապարփակ կարող է դրսևորվել հետևյալ փոխառնչությամբ ներկայացվող տիրույթներում:

Հետահայաց վերլուծությամբ դիտարկվող հարթությունում արտադրության և բաշխման «օրինաչափությունները» առանձնացված էին ուսումնասիրվում: (Նկատի է առնվում արժեքի ծախսային և սահմանային օգտակարության հայեցակարգի և ընդհանրապես դասական քաղաքատնտեսության և մարժինալիզմի հակասությունը): «Կապիտալում» այս միտումը «որոշակիորեն է պահպանվում»: Մինչդեռ, ի դեմս Ա. Մարշալի տնտեսագիտական տեսության հրատարակման, որում տեղի է ունեցել դասական քաղաքատնտեսության և մարժինալիզմի միավորման գիտական հիմնավորում, մարքսյան իմաստասիրության տնտեսագիտական հատույթում փորձ է արված արժեքի աշխատանքային տեսությունը համապատասխանեցնել իրականությանը: Կարելի է ընկալել, թե արժեքի «վերածումը» արտադրության գնի տեղի է ունեցել միայն պարզ ապրանքային արտադրությունից կապիտալիստականի փոխակերպման ժամանակ, իրականում «արտադրության գնի» բովանդակությունը համապատասխանում է «հավասարակշիռ գնի» արդի ընկալմանը[17]: Տնտեսագիտական մտքի զարգացման տեսանկյունից մարքսյան իմաստասիրության տնտեսագիտական բաղադրահիմքում լուծում է ստանում դեռ անտիկ աշխարհից «գիտական ժառանգություն թողնված՝ արժեքի աշխատանքային տեսության թնջուկը»: Այս կերպ հնարավորություն է ընձեռվում ապահովելու առաջարկի ու պահանջարկի, գնագոյացման արդի մեկնաբանությունների անհրաժեշտությունը: (Արժեքի տեսության իմաստը գների ձևավորման և հարաբերակցության բացատրությունն է): Ժամանակակից տնտեսագիտությամբ՝ գնագոյացման հաստատութենական հիմնավորումներում արժեքի հիմնահարցի դրվածքը հնացած և սպառված է համարվում, հղում է կատարվում (անհատական, շուկայական, ամբողջական) առաջարկի և պահանջարկի փոխառնչմանը, գների ազդարարման, կողմնորոշման, հավասարակշռման գործառույթներին:

Այսպիսով, Մարքսն արարեց տնտեսագիտության նոր բառապաշար և տնտեսագիտական յուրահատուկ մտածողություն: Սոցիալ-տնտեսական տարաբնույթ երևույթների վերլուծության տարբեր դեպքերում կատարվում են տարամակարդակ վերացարկումներ: Ներկայացված է «անհրաժեշտ» և «հավելյալ արժեք», «սպառողական» և «փո-

---

[17] Տե՛ս **Գ. Գալստյան, Ա. Մարտիրոսյան, Կ. Ավետիսյան, Մ. Եղիազարյան, Ա. Հակոբջանյան, Հ. Մարգարյան, Ա. Ներսիսյան,** Տնտեսագիտական մտքի պատմություն, Եր., 2009, էջ 108–111:

խանակային արժեք», «կոնկրետ» և «վերացական աշխատանք», «հասարակայնորեն անհրաժեշտ աշխատանք» և «աշխատաժամանակ» ու մի շարք այլ այսօրինակ հասկացությունների՝ տնտեսագիտական գրականությունում կիրառության ուղեծիր, որոնց միջոցով ամբողջանում ու ավարտին է հասնում մարքսյան տեսությունը: Բովանդակային առումով վերոնշյալ հասկացությունների հիման վրա ներկայացվում է Մարքսի տնտեսագիտական յուրատեսակ մտածողությունը, որը թրծվում էր կապիտալիստական հասարակարգի ընդերքում և, ըստ Շումպետերի, ի տարբերություն դարի հարթությունում ապրող և տնտեսական գիտության բնագավառում ստեղծագործող բազում մասնագետների՝ հստակ ընդգծված պատմափիլիսոփայական բնույթի էր, իսկ մնացյալ մեծամասնությանը՝ ֆիզիկամաթեմատիկական[18]: Վերլուծելով հասարակական-տնտեսական ֆորմացիաների էվոլյուցիայի խորքային օրինաչափությունները և գործընթացների դրսևորման առանձնահատուկ ձևերը՝ նա փորձում է բացահայտել կոնկրետ երևույթների կենսունակությունն ապահովող պատճառահետևանքային կապերը: Մարդկային աշխատանքի էության և աշխատանքի մարդկայնացման տնտեսագիտական ըմբռնման իմաստասիրությամբ զուգահեռներ անցկացնելով Մարքսի և Դարվինի աշխատությունների միջև՝ կարելի է արձանագրել, որ առաջինը բացահայտեց հասարակական-տնտեսական ֆորմացիաների, մյուսը՝ կենդանական և բուսական տեսակների փոփոխականության յուրովի միանման օրինաչափություններ: Մի դեպքում՝ «տեսակների», մյուս դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտների և տնտեսական հարաբերությունների էվոլյուցիան հանգեցնելու էր «թռիչքաձև» փոփոխությունների: Մարդու էության իմաստասիրական ընկալումը և տնտեսական օրինաչափությունների փոխառնչությունների վերլուծությունը կարևորվում են դասական, ինստիտուցիոնալ տնտեսագիտությունում և բազում այլ ուղղություններում: Դասական տեսության մեջ մարդն ընկալվում էր որպես բանական էակ, պատմության ելակետ, որն իր գործունեությունը կառուցում է հելվեցիուսյան ըմբռնմամբ, առավելագույն շահույթի, օգտակարության ստացման հիման վրա: Ըստ մարքսյան տեսության՝ սա կարող է ճշմարիտ լինել հասարակական-տնտեսական որոշակի «իրադրությունում», երբ շահութաբերության աճով պայմանավորված՝ կարող է տեղի ունենալ մարդկային օրենքների ոտնահարում: Համընդգրկուն ըմբռնման համաձայն՝ մարդ արարածը իր գոյությամբ «անցյալի հետևանք է», կրելով անցյալը, արժևորելով ներկան՝ կառուցում է ապագան: Մարդու էությունը, լինելով փոփոխական կատեգորիա, ենթարկվում է փոփոխությունների. պատճառահետևանքային կապով սա դրսևորվում է հասարակական-տնտեսական ֆորմացիաների փոփոխություններում:

Մարքսյան իմաստասիրության տնտեսագիտական ըմբռնման

[18] Տե՛ս **Й. А. Шумпетер.** История экономического анализа. Том 2. СПб.: "Эконом. школа", 2001, էջ 504 –506:

հաստատութենական բովանդակության գիտական ռեզոնանսն այնքան մեծ էր աշխարհում, որ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության և մի շարք այլ ոլորտների ներկայացուցիչներ «իրենց պարտքն էին համարում» գնահատականներ տալ «Կապիտալին» և բնութագրել մարքսյան ուսմունքը: Ազատական հայեցակարգի, պետության չմիջամտության և տնտեսության ինքնակարգավորման վրա հիմնված կապիտալիստական տնտեսական համակարգից քեյնսյան տեսության հիման վրա տնտեսությունում պետական միջամտությամբ պայմանավորված՝ շուկայական տնտեսական համակարգի ձևավորումը կարող է ներկայացվել որպես սոցիալիզմի ուղենշում: Ինչևէ, վերոգրյալ առումներով հետաքրքրական է Մարկ Բլաուգի տեսակետը, թե մարքսյան տեսության քննարկումները գիտական շրջանակներում տևում են օրեր ու ամիսներ շարունակ: Այդ քննարկումներին մասնակիցների ճնշման տատանումները սովորական երևույթ են. մերժվում են մի շարք դրույթներ, ընդհուպ առանցքային գաղափարներ, ու այս ամենից հետո այն կրկին վերածնվում է ինտելեկտուալ նոր հնարավորություններով[19]:

«Աշխատանքը թվում է միանգամայն պարզ կատեգորիա», նախապես արձանագրում է Մարքսը տարածված ընկալումը[20], ապա դրվատանքով նշում «Ադամ Սմիթի կատարած հսկայական քայլն առաջ». ի տարբերություն նախորդ տնտեսագետների, որոնք հարստության աղբյուր աշխատանքը կապում էին դրա որոշակի ձևի հետ (հողագործական աշխատանք, վաճառականություն, մանուֆակտուրա), Սմիթը գիտական հետազոտության կենտրոնում է դնում աշխատանքն առհասարակ և բուն հարստությունը մեկնաբանում որպես մարդկային առարկայացած աշխատանք: Իսկապես, հենց Սմիթն էր, որ իբրև ապրանքի սպառողական արժեքի «հիմնական և իրական» չափանիշ (the ultimate and real standard) հռչակեց աշխատանքը: Ուստի, Սմիթի տրամաբանությամբ, միևնույն աշխատանքը կատարելիս միջին առողջության, ֆիզիկական և հոգևոր ուժի, հավասար հմտությունների և ճարտարության տեր աշխատողը պիտի որ ներդնի «իր հանգստի, ազատության և երջանկության միևնույն բաժինը» (the same portion of his ease, his liberty, and his happiness)[21]: Այստեղ է, որ Կարլ Մարքսը փորձում է հաղթահարել սմիթյան մոտեցման միակողմանիությունը. զուտ տնտեսագիտական ընկալման պարագայում՝ զարմանալի չէ բնավ, որ Սմիթն աշխատանքի բուն ընթացքը, այսինքն՝ աշխատուժի ծախսումը բուն սուբյեկտի կողմից, դիտում էր միայն որպես հանգստի, ազատության և երջանկության զոհաբերում՝ «չտեսնելով այդ ծախսման մեջ նաև նորմալ կենսագործունեություն»[22]: Մինչդեռ առողջ մարդը, Մարքսի համոզմամբ, ունի «նաև պա-

---

[19] Տե՛ս **М. Блауг.** Экономическая мысль в ретроспективе. М.: "Дело" ЛТД, 1994, էջ 207:

[20] Տե՛ս **К. Маркс.** Экономические рукописи 1857–1861 гг. Ч. 1. М.: "Политиздат", 1980, էջ 41:

[21] **A. Smith** An inquiry into the nature and causes of the wealth of nations // http://socserv.mcmaster.ca/econ/ugcm/3ll3/smith/wealth/wealbk01

[22] **Маркс К.** Капитал, с. 56.

հանջմունք՝ աշխատանքի նորմալ բաժնի և հանգստի ընդհատման»[23]:

Այնպես որ սմիթյան «զոհաբերության» հայեցակարգը, թեպետ «ճիշտ է արտահայտում *վարձու բանվորի սուբյեկտիվ վերաբերմունքն իր սեփական գործունեությանը*», սակայն թույլ չի տալիս տեսնել երկու հանգամանք: Նախ, որ աշխատանքը, ամեն ինչից զատ, նաև իր՝ աշխատողի «որոշակի վերաբերմունքն է իր կողմից մշակվող առարկային և իր սեփական աշխատանքային ընդունակություններին»[24], և որ «հակառակ պարագայում դա չէր լինի նպատակասլաց գործունեություն, աշխատանք»[25]: Եվ երկրորդ. դրա շնորհիվ բուն աշխատանքի ընթացքում «արտաքին նպատակները կորցնում են միայն արտաքին, բնական անհրաժեշտության երևութականությունը և դառնում նպատակներ, որոնք անհատն ինքն է իր առջև դնում, հետևաբար՝ դրվում են նրա՝ իբրև սուբյեկտի առարկայական մարմնավորում, ինքնիրագործում, այսինքն՝ իբրև իրական ազատություն, որի գործունյա դրսևորումն է հենց աշխատանքը»: Վերջիվերջո, ըստ Մարքսի տպավորիչ բառախաղի, «այն, ինչ Սմիթը համարում է հանգստի զոհաբերություն, կարելի է նաև անվանել ծուլության, անազատության, դժբախտության զոհաբերություն, այսինքն՝ բացասում որոշակի բացասական վիճակի»[26]:

Հետագայում Մարքսի հետազոտական ուշադրության կենտրոնը տեղափոխվում է սոցիալ-քաղաքական դաշտ. հարցադրումները ուղղված են աշխատանքի բարերար բովանդակության և սոցիալական խաթարող ձևերի հակամարտության բացահայտմանն ու հաղթահարմանը: Ինչո՞ւ է «մարդու սեփական գործունեությունը նրա համար դառնում օտար, նրան հակադիր ուժ, որը ճնշում է նրան, փոխանակ ինքը իշխի դրա վրա»[27]: Ինչո՞ւ է աշխատողն ինքն անտարբեր կատարած աշխատանքի բուն բովանդակության հանդեպ[28], ինչո՞ւ է նա սեփական գործունեությունն ընկալում ոչ թե որպես իր մտավոր ու ֆիզիկական ուժերի դրսևորում, աշխատանքային հմտությունների զարգացում, այլ տանջանք, իրոք որ զոհաբերություն, ինչո՞ւ հարկադրանքը դադարելուն պես նա «աշխատանքից փախչում է, ինչպես ժանտախտից»[29]: Ինչո՞ւ է, ուրեմն, փիլիսոփայական լեզվով ասած, «աշխատանքը աշխատողի համար *արտաքին* ինչ-որ բան, իր էությանը չպատկանող»[30], ինչո՞ւ «աշխատանքի իմաստը նրա համար այն չէ, որ նա գործում է, մա-

---

[23] **Маркс К.** Экономические рукописи 1857–1861 гг. Ч. 2. М.: "Политиздат", 1980, с. 111:.

[24] Նույն տեղում, էջ 114: Ընդգծումը Մարքսինն է:

[25] **Маркс К.** Теории прибавочной стоимости (4-й том “Капитала”). Ч. 3. М.: "Политиздат", 1978, с. 274.

[26] **Маркс К.** Экономические рукописи 1857–1861 гг. Ч. 2, с. 111, 114.

[27] **Կ. Մարքս, Ֆ. Էնգելս**, Ֆոյերբախ. մատերիալիստական և իդեալիստական հայացքների հակադրությունը // Ընտիր երկեր, հ. 1, 1972, էջ 33:

[28] Տե՛ս **Маркс К.** Глава шестая. Результаты непосредственного процесса производства // **К. Маркс, Ф. Энгельс**. Соч. Т. 49. М.: "Политиздат", 1974, էջ 69:

[29] **Маркс К.** Экономическо-философские рукописи 1844 года // **К. Маркс, Ф. Энгельс**. Соч. Т. 42. М.: "Политиздат", 1974 с. 91.

[30] Նույն տեղում, էջ 90: Ընդգծումը Մարքսինն է:

նում, շաղափում և այլն, այլ այն, որ դա *վաստակելու* եղանակ է, որ նրան հնարավորություն է տալիս ճաշելու, պանդոկ գնալու, քնելու»[31]: Այս հարցերի մարքսյան պատասխանը մեկն է. պատճառը աշխատանքի հարկադրական բնույթն է, ստիպողական լինելը: Խնդիրը, այսպիսով, ստանում է գործնական-քաղաքական ուղղվածություն՝ ազատագրել աշխատանքի իրական իմաստը խաթարող ձևից, հաղթահարել աշխատողի օտարվածությունը:

20-րդ դարի 70-ական թվականներից մարդկային աշխատանքի իմաստի նկատմամբ տեսական և գործնական հետաքրքրության մի իսկական «պայթյուն» տեղի ունեցավ. հատկապես մարդկանց հանրային կեցության այդ վճռորոշ ասպարեզում ակնկալվող արմատական փոփոխություններին վերաբերող դատողություններն են ընկած հետարդյունաբերական հասարակության հիմնական բնութագրիչների տարատեսակ ուրվագծերում[32]: Եթե ամփոփենք **Պոլ Ռիկյորի** գնահատմամբ, ապա տեսական մտքի մեծ իրադարձություններից մեկը եղավ «մարդու՝ որպես աշխատավորի բացահայտումը կամ վերաբացահայտումը»[33]: Այսկերպ հաստատվում է մարքսյան հայտնագործությունը աշխատանքի իրական էության և մարդաստեղծ դերի մասին:

Մարքսի այդօրինակ կանխատեսումները իրականություն են դառնում նաև գործնական-տեխնոլոգիական առումով: «Աշխատուժ» և «տեխնիկա» հարաբերակցության մարքսյան ուսումնասիրության մեթոդաբանության մեջ կարող ենք առանձնացնել երկու կողմ. մեկը տեխնիկայի գործառության և զարգացման ներքին օրինաչափությունների, «մարդ – տեխնիկա» համակարգի ինքնաշարժման, ինքնազարգացման օրինաչափությունների պարզաբանումն է, մյուսը՝ տեխնիկայի և տեխնոլոգիայի՝ որպես սոցիալական երևույթի արտաքին պատճառակցվածության բացահայտումը, մարդկային աշխատանքի զարգացման և մարդու էութենական կարողությունների վրա դրանց ազդեցության լուսաբանումը:

Բուն տեխնիկան, ըստ Մարքսի, մարդու նպատակահարմար գործունեության համար է ստեղծվել, ուստի և տեխնիկայի, տեխնոլոգիայի սոցիալ-փիլիսոփայական գնահատականն այն պիտի լինի, թե դրանք որքանով են նպաստում մարդկային աշխատանքի առավել արդյունավետ կատարմանը: Հանգամանորեն ուսումնասիրելով արհեստագործական արտադրությունից մանուֆակտուրայի միջանկյալ փուլով մեքենաների վրա հիմնված արտադրությանն անցումը՝ Մարքսը առաջինն է պարզաբանել 18-րդ դարավերջի–19-րդ դարասկզբի առաջին արդյունաբերական հեղափոխության սոցիալական պայմանավորվա-

---

[31] **Կ. Մարքս**, Վարձու աշխատանք և կապիտալ // **Կ. Մարքս և Ֆ. Էնգելս**, Ընտիր երկեր, հատ. 1, Եր., 1972, էջ 202: Ընդգծումը Մարքսինն է:

[32] Տե՛ս **D. Bell,** Labor in the Post-Industrial Society. Special Issue: The World of the Blue Collar Worker // Dissent, vol. 19, n. 1, 1972:

[33] **Պ. Ռիկյոր**, Աշխատանք և խոսք // Ռուբիկոն, Եր., 2007, էջ 5:

ծությունը: Եթե ստրկատիրականին փոխարինած ավատատիրական հասարակարգը չփոխեց իր տեխնոլոգիական հիմքը, քանի որ որպես բնամթերային տնտեսություն լիովին բավարարվում էր արհեստագործական աշխատանքին հասու արտադրողականությամբ, ապա կապիտալիստական հասարակարգը իրեն բնորոշ շուկայական տնտեսությամբ խիստ կարիք ուներ աշխատանքի հասարակական արտադրողականության կտրուկ վերելքի, ուստի խթանում էր մեքենաների զանգվածային մուտքը արտադրություն:

Շարունակելով «մարդ–տեխնիկա» համակարգի ներսում կողմերի գործառույթների վերաբաշխման տրամաբանության վերլուծությունը՝ Մարքսը հանգում է արտադրության ավտոմատացման հեռանկարին և փորձում է բնութագրել այդ պայմաններում աշխատանքի սուբյեկտի տեղն ու դերը, ինչպես նաև նրա անձնային զարգացման հնարավորությունները: «Մարդ–տեխնիկա» համակարգի ինքնազարգացման մեջ Մարքսն առանձնացնում է «աշխատանքի կենդանի պրոցեսում արտադրության միջոցների ձևով մասնակցող անցյալ աշխատանքի անընդհատ աճող նշանակությունը», որը վճռորոշ է դառնում արտադրության մեջ գիտության հարաճուն տեխնոլոգիական գործադրմամբ, և այդկերպ աշխատանքի սուբյեկտն այլևս ուղղակիորեն ներգրավված չի մնում արտադրության բուն ընթացքի մեջ, այլ աստիճանաբար արտամղվում է դեպի արտադրության վերտեխնոլոգիական ոլորտը: Այդ պայմաններում «աշխատանքը հանդես է գալիս արդեն ոչ այնքան իբրև արտադրության ընթացքում ներգրավված, որքան այնպիսի մի աշխատանք, որի դեպքում մարդը, ընդհակառակը, վերաբերվում է բուն արտադրության պրոցեսին իբրև այն վերահսկողը և կարգավորողը.... Արտադրության գլխավոր գործակալը լինելու փոխարեն աշխատողը կանգնում է արտադրության կողքին»[34]:

Իհարկե, նույնիսկ ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում այս կանխատեսումը լիովին իրականություն չի դարձել, բայց փաստորեն Մարքսը միանգամայն ստույգ է նշել «մարդ – տեխնիկա» համակարգի զարգացման հիմնական միտումը: Իսկ անցյալ դարի 70-ական թվականների վերջից լայն թափով տարածվող «աշխատանքի հումանիզացման» տեսությունները և գործնական միջոցառումները[35] դարձյալ հաստատում են մարքսյան եզրակացության հիմնավորվածությունը: Դրանց հիմքում ընկած է «աշխատանքն ինքնին» (work itself) գաղափարը, այսինքն՝ ժամանակակից մարդու աշխատանքային վարքագծի արդյունավետ կառավարման համար կարևոր է, անշուշտ, տնտեսական արդարացի վարձատրումը, նպաստավոր են աշխատանքային բարենպաստ պայմանները, ղեկավարման ժողովրդավարական ոճը, աշխատակազմի ներսում տիրող հոգեբանական մթնոլորտը և

[34] **Маркс К.** Экономические рукописи 1857–1861гг. В 2-х ч. Ч. 2, с. 215, 216.

[35] Տե՛ս հանգամանորեն **Վ. Միրզոյան**, Կառավարման փիլիսոփայություն, 5-րդ. լրացվ. հրատ., Եր., 2015, էջ 182–211:

այլն, բայց առաջին պլան են մղվել բուն աշխատանքին ներկայացվող պահանջները՝ ինքնին բովանդակալից լինելը, ստեղծագործական տարրերը, անձնային-մասնագիտական աճի հեռանկարը, աշխատանքի սոցիալական բարձր արժեքը, աշխատանքի միջոցով կազմակերպության ամբողջ գործունեության պլանավորմանը մասնակից դառնալու հնարավորությունը և այլն: Մարքսյան այն կանխատեսումը, թե աշխատանքը երբևէ կդառնա մարդու համար առաջին կենսական պահանջմունք, թեկուզ որպես միտում սկսել է գերիշխել աշխատանքի հանդեպ նոր սերունդների վերաբերմունքի մեջ: Այսկերպ ևս մեկ անգամ համոզվում ենք մարքսյան հիմնադրույթների կենսունակության մեջ. դիցուք՝ ԽՍՀՄ-ի օրոք աշխատանքի վերածումը մարդու առաջին կենսական պահանջմունքի հռչակվել էր որպես կոմունիստական հասարակության կառուցման նպատակային դրույթ, բայց իրական կյանքում դա անկատար էր մնում: Իսկ ահա տեխնոլոգիական հնարավորությունների ընդլայնումը, կոմունիստական քարացած դոգմաներից ազատումը, կյանքի և աշխատանքի մասին 21-րդ դարի մարդու պատկերացումները նոր լույսով են մեզ մատուցում Մարքսի գաղափարները, նորովի համոզում դրանց ճշմարտացիությունը:

Բանալի բառեր – *«Կապիտալ», «Մարքսի սխալները», Մարքսի տնտեսագիտական վաստակը, «մարդ – տեխնիկա» համակարգ, մարդկային աշխատանքի էություն, աշխատանքի մարդկայնացում*

ВАЛЕРИЙ МИРЗОЯН, АРМАН МАРТИРОСЯН – *Попытка по-новому оценить теоретические заслуги Карла Маркса.* – В статье предпринята попытка обобщить и по-новому оценить вклад К. Маркса в развитие теоретической мысли в разных областях научного познания. С другой стороны, подробно проанализированы реальные и приписываемые ему ошибки. Прежде всего, Маркс всесторонне исследовал капиталистический способ производства и закономерности его становления, раскрыл глубинные противоречия в его функционировании и развитии. “Маркс возвращается!” – повторяют ныне экономисты, социологи, философы, политологи, и это означает, что следует заново прочесть теоретическое наследие классика, особенно его титаническое творение – “Капитал”.

Ключевые слова: *“Капитал”, “ошибки Маркса”, вклад в развитие экономической мысли, система “человек – техника”, сущность труда, гуманизация труда*

VALERI MIRZOYAN, ARMAN MARTIROSYAN – *An Attempt to Reassess Karl Marx’s Theoretical Merit.* – The article attempts to appreciate the theoretical merit of Karl Marx in different areas of scientific knowledge. The real and attributed errors are analyzed in detail. The merit of Marx consists first of all in a comprehensive study of the laws of the formation of the capitalist mode of production, the discovery of deep contradictions in its functioning and development. “Marx is back” – report today many economists, philosophers, sociologists, politicians, and it means that we must reread the theoretical heritage of Marx and especially his titanic “Kapital”.

Key words: *“Kapital”, “the mistakes of Marx”, the earnings of Marx on the economic thought, “man – technics” system, essence of human’s work, humanization of work*